



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ի Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

3 մայիսի 2017թ. թիվ 45

Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ
ՄԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 163 հոդվածի, ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, 18-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հաշվի առնելով Վ.Խաչատրյանի դիմումը՝

Կ ա Ր Գ ա Դ Ր ՈՒ Մ եմ.

1. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Վալերի Խաչատրյանին տրամադրել 2017 թվականի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդի մի մասը ս/թ մայիսի 10-ից 12-ը ներառյալ՝ 3 աշխատանքային օր:

2. Վ.Խաչատրյանի արձակուրդում գտնվելու ժամանակ փոխարինող նշանակել մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Սամվել Մակարյանին:

ՀՀ ԼՈՒՈՒՄԱՐԶՊԵՏ

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2017թ. մայիսի 3
ք.Վանաձոր